

# ՎԱՂՈՒԱՆ ԶԱՅՆԸ

ՀԱՆԳԻՍ ԱՄՍԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

## ԲԱՑ ՆԱՄԱԿ

### ՀԱՅ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Այս սողերը ստորագրողը կուսակցական մը չէ ու երբէք չէ՛ եղած: Իր անունը անծանօթ է ձեր միջավայրին մէջ: Կը պատկանի ազգին այն բաղամթիւ մեծամասնութեան որ հեռու մնաց քաղաքական բուն գործունէութենէն, ու իսկապէս կուուող մը չեղաւ, եւ որ հետեւեցաւ սակայն էն անձկագին շահագրգռութիւնովը, էն եռանդոտ հայրենասիրութիւնովը իր ժամանակի դէպքերուն: Այս յատկութիւնը իրեն կուտայ առաւելութիւնը ձեզի հետ խօսելու իր մտքին բացարձակ ազատութիւնովը, կատարելապէս անկախ եւ անչահախընդիր կերպով: Չունենալով անձնական ո եւ է կիրք, չունենալով դատապարտելութեանամբիւններ եւ չոյելու բարեկամութիւններ, կը գտնուի միմիայն իր խօսելու իրաւունքին մէջ:

Այս նամակը չուղղուիր յեղափոխական ժողովուրդին որուն դերը սահմանափակուած է. այլ անոնց որ առաջնորդեցին զանի, որ գործեցին անոր անունով, անոր դրամով, անոր անձնուիրութիւնով, կուսակցութիւններու, խումբերու, խմբակներու պետերուն, վերջապէս անոնց որ հրամայեցին եւ հետեւաբար՝ պատասխանատուներուն:

\* \* \*

Խորհած էք երբէք իմաստին վրայ այն ծանր եղելութիւններուն որոնք երեք տարիէ ի վեր յաջորդեցին իրարու եւ որ չինեցին Հայ ժողովուրդին ճակատագիրը թերեւս ամբողջ կէս դարի համար: Խորհած էք երբէք

թէ ի՞նչ կապակցութիւն, ի՞նչ առնջութիւն ունեցաւ ձեռնէ իւրաքանչիւրը ազգին վրայ ծանրացող այս մեծ աղէտքին հետ: Մեր առաջնորդները եղաք եւ պարտուած կը վերագտնաք պայքարէն: Ունեցա՞ք քաջութիւնը, արժանիքն իսկ՝ ձեռքերնիդ դրած ձեր խղճմատանքին վրայ՝ անկեղծօրէն քննելու ձեր գոյութեան նկարագիրը, ձեր գործին իմաստասիրութիւնը: Չարիքը անխուսափելի՞ եղաւ արդեօք, զիպուածի խա՞ղ մը, վե՞ր ձեր ուժէն...: Ատեն է որ դէմ առ դէմ գաք ձեր գործին հետ, խօսիք ազգին, խոստովանիք, խոնարհ եւ համեստ ըլլաք:

Այսօր երէկուան չափ զօրաւոր չէք: Ձեր կուսակցութիւններէն իւրաքանչիւրը կորսնցուցած է իր նախկին ուժը եւ ազդեցութիւնը: Անուններ որոնք ազգին փառքը կը նկատուէին երէկ՝ հիմա մոռացումի մէջ քաշկռտուող տրտում բեկորներ են: Ձեր վարչութիւնները, ձեր կազմակերպութիւնները կը քայքայուին յամբօրէն: Դրամը կը նուազի: Ձեզի ողջունող խանդավառութիւնները կը մարին կամաց կամաց. երազները կը լեցուին պատրանքով: Ժողովուրդը իր կռնակը կը դարձնէ ձեզի ու գրեթէ միս մինակ էք: Խօսակցութիւններու մէջ երբ ձեր անունը արտասանուի՝ մարդիկ կուզեն հեռացնել չարաշուք յիշատակներու յաճախանքը իրենց միտքէն: Ու ձեր կոչերը, ձեր խրախոյսները անգօր կը մնան. ձեր իմաստութեան խորհուրդները, ձեր հանդարտութեան յորդորները կասկածանքով կը կարգացուին. ձեր թերթերը զլուանքով մէկ կողմ կը նետուին: Խորհած էք արդեօք թէ ինչո՞ւ...:

Եւրոպայի մէջ, Պօլսոյ մէջ, գաւառներու մէջ, ամէն տեղ, որբեր, որբուարիներ, ընկճուած եւ ցաւագին համակերպողներ, խեղճ եւ բարի մարդիկ որոնց տունը թալլուեցաւ ու դաշտը հրդեհուեցաւ, յողնած եւ հիւանդ մար-

գիւղ որոնց ծերութիւնը նախատուեցաւ եւ երտասարդութիւնը թողմեցաւ, կը զգան յանկարծ խղճմտանքի էն ահաւոր ըմբոստացումը: Սարսափին եւ սուգին մեծութեանը առջեւ, դողդոջուն չրթունքներէն դուրս կելլայ անէծքը...: Դուք յեղափոխական կըսէք ձեզի, անոնք մարդասպան կը կոչեն...: Խորհած էք արդեօք թէ ինչո՞ւ...:

Հայ ժողովուրդին ցուցնել ուզեցիք ձեր կարողութեան չափը. ըսիք թէ պիտի կարենայիք կործանել Սուլթաններու դահլը, ստիպել եւրոպական պետութիւնները, պատժել դաւաճանները. ըսիք թէ Հայաստանի բարօրութիւնը ձեր ձեռքն էր, ու չմոռցաք մինչեւ իսկ ձեր ընկերվարական նահանգը: Էն լաւատեսները սակայն չեն կրնար հաշտեցնել այսօրուան իրականութիւնը ձեր խոստացած երանութիւններուն հետ: Ու կը շարունակէք նորէն կրկնել, կատաղօրէն, ծափերով եւ կեցցէներով, առանց յոգնելու, միեւնոյն աւետումները, միեւնոյն դրախտները...:

Բայց ալ ձեզի չեն հասկնար:



Յաւին գիտակցութիւնը արթնցաւ օր մը. հաւատքի փառաւոր խոյացումի մը մէջ՝ Հայ ժողովուրդը ընդնշմարեց նոր կեանքի մը հեռապատկերը: Այն ատեն իր գոյութիւնը ուզեց նուիրել գեղեցիկ անձնուիրութիւններու: Հարուստը չհաշուեց իր ոսկին, աղքատը՝ իր պղինձը: Ազատութեան գործին համար Մահը չհրեւցաւ անոր աչքին: Ձեր տրամադրութեան տակ պատրաստ գտաք է՛ն սքանչելի եղբայրութիւնը: Ըսէ՛ք, ի՞նչպէս գործածեցիք զայն. ի՞նչ ըրիք ձեր վրայ գրուած վստահութիւնը. ի՞նչ ըրիք բարի կամքերու այդ մէկ հատիկ ուժը: Ու՞ր է այն գեղեցիկ արդիւնքը որուն իրաւունք ուներ սպասելու Հայ ազգը զձեզ իր առաջնորդները ընդունելով: Ահաւասիկ, որովհետեւ ձեր լռութեան դէմ, ձեր խաբեբայ եւ չահախնդիր յոխորտանքներուն դէմ պատմութիւնը կը պատասխանէ. — երկու հարիւր հազար գիւղի Պօլիսի ու Հայաստանի հոգերուն վրայ, քայքայումը, ստորնացումը, ամօթը... ահաւասիկ ձեր գործը:

Քաղաքական մեքենայութիւններ քաջալերեցին ձեզի ընելու Պապ-Ալիի առաջին

ցոյցը: Կարծեցիք զօրաւոր համակրութիւններ ունենալ: Անգլիական սպառնալիքներուն սաստկութիւնը չլացուց Հայ ժողովուրդը: Բայց մարդիկ որ իրենց ձեռքին մէջ կը բռնեն ամբողջ ազգի մը կեանքը, պէտք է ունենային բացարձակ ըմբռնումը իրենց ժամանակի ոգիին: Պէտք էր կարենային հասկնալ առերեւոյթ բարեկամութիւններու ճշմարիտ նկարագիրը: Պէտք էր հաշուէիք անկարելին: Բայց կանցնիմ: Օսմանեան Պանքաին ցոյցը սակայն վերջնականապէս ճանչցուց ձեզի: Տեսանք թէ ի՞նչ ոճրագործ ձեռքերու յանձնած էինք մեր բաղդը: Ի՞նչպէս արգարացնել այդ զարհուրելի շահատակութիւնը, տգիտութեան, անկարողութեան ու աներեւակայելի տխմարութեան այդ հրաշքը: Փառաւոր մարտիրոսներ կը ցուցունէք մեզի. կը խոնարհինք յարգանքով անոնց մահերուն առջեւ. բայց ի՞նչպէս կարելի է նըկատի առնել անհատական մեծութիւնները երբ անդին միլիոնաւոր գոյութիւններ կը վտանգւին, երբ՝ սասը հոգիի քաջութեան փոխարէն՝ հաւաքակական ահուկի ջարդերու պատճառ կըլլաք: Յետոյ, ի՞նչպէս կարելի է չքմեղանք գտնալ այն երկու դաշնակցական դպրոցականներուն որ անցեալ տարի, ռումբեր պայթեցնելով Պապ-Ալիի շէնքին մէջ, մազ մնաց պիտի վերսկսել տային արիւնի հեղեղները: Ու աղէտքին մեծութիւնը դաս մը չեղաւ ձեզի: Տեսաք թէ Եւրոպան խուլ կը մնայ մեր նահատակութիւններուն առջեւ. թէ ո՞չ միայն յանձն չառնեք պատերազմ հրատարակելու թուրքիոյ դէմ, այլ նոյն իսկ — քաղաքական անհամերաշխութեան պատճառով — անոր վրայ ո եւ է ճնշում բանեցնելու մեզի ի նպաստ: Տեսաք թէ այսպէս առանձին մնալով՝ Հայ ժողովուրդը պիտի չկրնայ գիմադրել իրմէ հազար անգամ աւելի ուժովներու՝ դեռ աւելի զօրացած հելլենական պարտութիւններով: Յետին իմացականութիւնը ըմբռնեց թէ քաղաքական ներկայ պայմաններուն մէջ՝ զէնքի ամէն շարժում մեզի միմիայն աղիտարեր կըրնար ըլլալ: Եւ սակայն ո՞չ, դուք երբէք չը հասկցաք այս տարրական ճշմարտութիւնը:

Ու նորէն թող կուտաք, կը քաջալերէք որ գաւառներուն մէջ՝ հրոսակային հայ խումբեր շարունակեն իրենց չարաշուք խաղերը: Այդ ծիծաղելի եւ գարշելի կատակներով յաճախ

պատճառ եղաք որ շատ մը ջարդերէ խնայուած հայաշատ քաղաքներ աւերակի վերածուին: Դաշտին մէջ քնացող քիւրտի մը վրայ երբ հրազէն կը պարպէք՝ անոր փոխարէն ամբողջ զիւղեր աւարի կը տրուին եւ կը հրդեհուին:

Ու ձեր լեզուին լրբութիւնը չէ նուազած. կը շարունակէք յայտարարելու թէ Հայաստանի փրկութիւնը այդ անօգուտ արիւնհեղութիւններուն մէջ կը կայանայ: Քանի մը հօգիի յետամնաց իմաստութեան քով, միեւնոյն ծաղրելի մեծխօսիկութիւնը, միեւնոյն շնական անպատկառութիւնը կը լեցնեն ձեր թերթերը: Դրօշակի մը մէջ, Շարժումի մը մէջ, օրինակի համար, անորակելի իմաստակներ կը շարունակեն իրենց դաւազրութեան գործը:

Անարգար պիտի ըլլար կանգ առնել ձեր քաղաքական հաշիւներուն տխմարութեանը վրայ: Միմիայն տխմարներ չէք գուք, այլ մանաւանդ խաբեքաներ, նենգամիտ բաղբախնդիրներ ու դաւաճաններ: Անկեղծները եւ ճշմարիտ հայրենասէրները անոնք են որոնք կը հաւտան ձեզի եւ ձեր զոհերը կըլլան, ձեր հրամաններուն անսացող կտրիճներն են: Իսկ դուք Հայ ազգին բարօրութենէն աւելի անհրաժեշտ բան մը ունիք խորհելու. ձեր սպրուստը: Մհ, անշուշտ դժուար է ձեր ամենուն մէջ մէկ նաղարբէկ ըլլալ. բայց նորէն՝ ձեր այնքան շահաւոր արհեստին մէջ կարելի է կեանք մը նիւթապէս ապահովցնել: Եթէ մենէ ամէն մարդ պատմէր միմիայն իր փորձառութիւնով հասկցածները հատորներ հարկ պիտի ըլլար գրել: Քանիսն՝ ձեր մէջէն յեղափոխական եղած են որովհետեւ անկարող կը զգային ինքզինքնին ուրիշ բանի:

Ձեր գարշելի երկպառակութիւններով՝ մատնիչներ եղաք ազգին: Բարեկամութիւններու եւ նոյն իսկ եղբայրութիւններու մէջ, տարածեցիք աղիտաբեր անմիաբանութիւնը: Հազարաւոր քաղաքացիներ թունաւորուեցան ձեր սուտերով եւ ձեր զրպարտութիւններով: Ու վատութիւնը յառաջ տարիք մինչեւ իսկ սպաննել փորձելու ձերիններէն մէկը, ձենէ էն նուազ յանցաւորը, ապահովաբար: Այսօր, ափ մը ժողովուրդի մէջ՝ երեք քաղաքական կուսակցութիւն ունենալու անուր տեսարանը կընծայենք աշխարհիս: Երեք հատ, իրարմէ աւելի դաւազիր: Ձեր հասարակաց թշնամու-

թիւններուն մէջ՝ մարդկային ի՞նչ զգացում, հայրենասիրական ի՞նչ մտահոգութիւն կրնան երբեք գոյութիւն ունենալ: Այսօր ահուայ կը կրճատէք իրարու. վաղը, եթէ ձեռքերնուդ գայ, պիտի չվարանիք իրար բզբտելու: Ժողովուրդին անձնուիրութիւնը ձեր ոտքերուն տակը առիք. անոր նուիրական խանդավառութիւնովը էն գարշելի ախորժակները գոհացուցիք: Հայ ազգը ձեր խաղալիքը ու զոհը եղաւ, երբէ՛ք ձեր պաշտպանուածը:

Ու կը համարձակիք յեղափոխական կոչել ինքզինքնիդ: Յեղափոխական, ազուոր եւ հնչական բառ, որ հակառակ ոճիրին ակներևութեան, շատ անգամներ կուրցընող քօղը կըլլայ ամբոխներու աչքին: Յեղափոխութի՞ւն, ձեր զգուելի երկպառակութիւնները, ձեր գողութիւնները, Օսմանեան Պանքաի եւ Պասպ-Ալիի երրորդ ու վիժած ցոյցերը, յեղափոխութի՞ւն, գաւառներուն մէջ մինչեւ այսօր աեւող արիւնտա եւ ճզած խլրատմները: Բայց ի՞նչ կը նշանակէ յեղափոխութիւն մը ուր իմաստութիւնը եւ գիտակցութիւնը կը պակսին եւ որ միմիայն աւերումը կը ստեղծէ: Ի՞նչ գեղեցկութիւն կրնայ բովանդակել անիկա երբ կը քանդէ առանց շինելու: Բառին բարձր ու նուիրական իմաստը չի կրնար սեղմուիլ ձեր ուռուցիկ բացազանչութիւններուն մէջ, ինչպէս քրիստոնէական եղբայրութեան գաղափարը՝ չի կրնար հայտուիլ ճիզուիթի մը մեքենայութիւններուն հետ:



Բայց կը հասնիմ եղբակացութեանս: Այսօր ձեր սխալ եւ անխիղճ գործունէութիւնը Հայ ժողովուրդին սպառնացող մեծագոյն վըտանդն է: Անկարող էք ըմբռնելու ձեր վրայ ծանրացող պատասխանատուութիւնը. անկարող էք քիչ մը մարդկութիւն ունենալու ձեր սըրսերուն մէջ, որովհետեւ ձեր ահաւոր գործին առջեւ, խղճի խայթը պէտք է չարչարէր ձեզի, եւ պէտք էր թաղէիք ձեր գոյութիւնը լըռութեան եւ մոռացումի մէջ: Հայաստանի մեք, ձեր հրտանելով եւ մեղաւորութիւնով կը շարունակուին հրոսակային շարժումները. վաղը կրնաք նոր յիմարութիւնով մը վերջնականապէս ջընջել վերակենդանացումի ամէն յոյս:

Պէտք է հանդարտ նստիք տեղերնիդ,

եթէ չէք ուզեր, անդգամութեան մէջ, վերջնականապէս ձեր տեղը ունենալ թիւրք դահիճներուն քով: Պէտք է որ ալ գաղբին բոլոր այդ անիմաստ ու ոճրագործ ցոյցերը: Ինչ որ այս միջոցիս անհրաժեշտ է Հայ ժողովուրդին, ընկերական խաղաղութիւնն է, ինքնամփոփումի եւ աշխատութեան կեանքը: Մտածեցէք որ չէք կրնար անպատիժ երկար ասան շարունակել զեռ այսպէս, ու երբ վաղը, անիկա կատարելապէս վերագտնէ իր մտքի յատկութիւնը եւ կորովը, հաշիւ պիտի պահանջէ ձեռնէ: Գիտակցութիւնը՝ թմրած աղէտքին մեծութենէն՝ կարթննայ արդէն յամբօրէն ու պէտք պիտի ըլլայ ձեզի պատասխան տալ:

\* \* \*

Չէ՛, այս վիճակը չի կրնար տեւել. տեսէ՛ք, երոտասարգութիւնը կը սկսի շարժիլ: Վաղը ոչ ոք պիտի գտնաք ձեր շուրջը: Ու եթէ նոյն իսկ վայրկեան մը Հայ ժողովուրդը մոռնայ ձեր ոճիրը, պիտի գտնուին միշտ բաւական համարձակ մարդիկ յիշեցնելու համար զայն իրեն: Ոչինչ պիտի կրնայ արգելել որ խղճամիտները խօսին:

Քաղաքական ներկայ պայմաններուն մէջ մեր փրկութեան միակ միջոցը խաղաղութիւնն է: Ասոր ձգտիլ, ահաւասիկ ամենքնուս պարտքը: Մեր մասին, պիտի չյոգնինք կրկնելու այս խօսքերը եւ ինչ որ կարգացուցեցաւ այս տողերուն մէջ: Եւ որովհետեւ ոչ մէկ խումբի կը պատկանինք, որովհետեւ վարժուած չենք մեր քսակին մէջէն տեսնելու ազգային ճակատագիրը, որովհետեւ անկախներ, անշահախնդիրներ եւ անկեղծներ ենք, լսելի պիտի ընենք մեր ձայնը:

**ԱՌԱՔԵԼ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ**

\* \* \* ԱՄԷՆ ԱՆՈՆՔ ՈՐ ՉԵՆ ՈՒՋԵՐ  
 ՉՐԻ ԿԱՐԴԱԼ ՄԵՐ ԹԵՐԹԸ ԹՈՂ ՀԱՃԻՆ ՓՈՒ  
 ԹԱԼ ՄԵՋԻ ՂՐԿԵԼՈՒ ԻՐ ԵՆՑ ԲԱԺՆԵԳԻՆՆԵՐԸ



**ԲԱՐՔՆԵՐԸ**

Երանի անոնց:  
 Որովհետեւ անոնց հասար է երկնքի արհայտքներ, դրամին պահները, ու հողին աղւոր աղջիկները:  
 Բարիներն եւ մարդկութեան անեկեկ մեծ աշխարհակալները: Անեկուն սիրելի, անեկուն սիրող, պարսաւորիչ պարսաստանախոսներուն, հանոյակասարոքներուն անպատ գանձով մը շեցուն, ու դեմքերին միշտ շուսաւոր, միշտ երջանիկ մշտադար Կեղծիքին ժպիտովը:

Անոնց բարոքներ կունակին կը սկսի, կըսկոր, պարսպ գունդի պես կոր, առաքիլի ու պարկեշտ կունակին, որ քիսոնեկական երանութեանք մը կը կրի. կը պսոկի ուժովներուն ու ջարերուն առջեւ: Օ՛ պնակաշէրի այդ անխոնց խանդալաւունը:

Գրուիլին բարի է, անպակնին բարի է, այգերնին բարի է, անեկուն բարոքներովը բոլոր անկեղծ դասարկութիւններուն: Ու ձեռքերնին, ուրոնց միտակիս խոշորութեանք առջեւ մարդուն սիրք կը յեցուի քաղցր սխրութեանք մը, բարի է զգես քանակայի մը անխուսս ձեռքերուն չափ: Ու հասակնին, ու շայնաւաւ ու քանձար մեջքերնին, յայդ փորերնին, ոսքերնին անգամ, չեւ գիտեր ինչ յուռ, ու ժպտն բարոքին մը ունին, որ կը յուզէ տեսողը արգանսալիք գգուակնով մը: Անոնք միայն գիտեն բոլոր երջանկութիւնը որ կայ ինքնագոհ ու անկեղծ Տգեղութեան մեջ:

Անոնց հագուստները անգամ յեցուն եւ բարոքներով, ու անոնց ոքսեկոքները, — օ՛հ, տրուակական օրերն այդ անպատու ոքսեկոքները — յուզած քաքախումը ունին պակսակնքու երկնքի արհայտքեան գաւակներուն:

Տարօրինակ է իրենց ժպիտը. կարծես քի դարերէ ի վեր կը ժպտին, եւ քի յաշտեակակնութիւն մը պիտի ժպտին դեռ: Տրտնութեան շնորհը, արցունքի անուշ բարումը երբեք չի իջած այս վաշտագորհեւ երջանիկ, առաքիլի դեմքերուն վրայ: Անոնց կոյր ու մուր հոգիներուն անխուսս ու հսկայ խաղաղութեանք մեջ երբեք չի հնչած մտաւորական քաղցրութիւններն ժամը:

Պզտիկ պզտիկ քաղցր ունին, փորի շնորհայի ու յուզիչ դժուարութիւններով, որ խանդաղասուն-

ֆով կը յեցնեն պստաւ մահիկներու ւրտեր: Մի-  
ակ գեղեցիկ մը ունի՛ն՝ կիրակի օրուսն յասուկ — ո՛վ  
եղերերգութիւն — իրենց սիւքսաթը, որուն պեր-  
ճախօտութիւնը՝ երբութեան ու սգնուսիտութեան  
աշխատեան մը վրայ կանգուն կրկնէ՛ գիւ իր  
անդիսնադրեցի անճոռնիտութեանը մեջ:

Բարիներն են՝ մահիկանցուններուն անեղեկ  
նախանձեղները, անեղեկ խնաստունները: Անոնք  
միայն գիտեն հաշուուած, ու հաշուող բարութեան  
մը բոլոր հրաշալի արդիւնները: Երբեք սիւս  
ֆայը մը չեն առներ, երբեք չեն խանդավախի,  
երբեք չեն զինովնար հոշակապ զեղեցկութեան մը  
յուզումովը, հպումովը, ինքզինեցին երբեք չեն  
մոռնար: Անոնք երբեք չպիտի խեղեցնան, ու  
անոնք միշտ պիտի ժպտին, հեռաւոր ու խորհր-  
դաւոր ժառանգականութիւններու հիկնաւորց ժպի-  
տովը: Աւերողը կեանքերէնին հաշիւ մըն է, իրենց  
սերը հաշիւ մըն է, իրենց անուանութիւնն ալ,  
միկնէր իրենց ճաշերը, միկնէր իրենց բարեւները:  
Ապրող բուսականութիւններ են:

Ու անոնք բշխակի չունին: Իրենց շոք-  
մալից բարութիւնը չեզոքացուցած է բոլոր բան-  
աստի մոմովները, ու իրենց միաստի անճոռնի-  
տիւնը արգաստանքով հեռացուցած է սգնը-  
ւախն ու հագուագիտ հոգիները: Բարութիւննե-  
րուն անեղեկ շայնը ճանչցած են անոնք, — կեղ-  
ծաւորութիւններով, ստերով, շոքոբորութիւն-  
ներով, գոեկոթիւններով, արգաստար ու հաշ-  
ուող բարութիւն մը, որ գիտեմք պաշտելի ըրած  
է անեղեկ, իրենք անեղեկն պաշտողը, — որով-  
հետեւ անոնց փորերը միայն ճանչցան փոռու-  
քու, սողաքու անեղեկ ճարտար, արդիւնաւոր, ու  
խանդոտ կերպերը:

Իրենց բարութիւնովը ուժովցած՝ կուզայ  
ասեն մը ուր ալ գնալէն իրրան: Ասիկա գիտեն  
իրենք, բայց չեն հպարտանար, կը ժպտին մա-  
նուշակի անայրայի հաւեսութիւններով, ու միշտ  
կը ձգտին անելի բարի ըլլալ, անելի խոնարհ,  
անելի զնայելի, դիւային հանոյնով մը բոցե-  
րով իրենց սնուցն արժանապատիւութիւնը, ու ջա-  
նալով ըլլալ նողկալիտեան, այնչափ վստէ՛ որչափ  
Հաստի խեղճ գնորածները իրենց վայրագ սր-  
բութեան ու ստապագիկ յախշակութիւններուն  
մեջ:

Ու, բնականաբար, կը յաջողին անոնք,  
վասնզի խոշորութեան չիտն իրենց ճարտուն վրայ,  
ինչպիսի ուղեղ մը ու արտի մեծութիւններ, որոնք  
աներոյ պերճանքներ են մարդկութեան աշխ-  
տար օրերուն մեջ:

Ու հետզհետեւ երեւան կուզայ, ո՛վ հրա-  
շալիք, ստափիւնութիւններու բանկազին գունձը ո-  
րով օժտուած են: Անոնք հայրենասեր են, եկե-  
ղեցասեր են, ազգասեր են, աղջաստեր են, մար-  
դասեր են, որբասեր են, խնայասեր են, ընտ-  
նեցտեր են, ու զաւակասեր պիտի ըլլան երբ կար-  
գուին, ու բոռերնին ալ պիտի սիրեն, ու իրենց  
բոռին բոռն ալ, ու ասոնք անեղեկն ալ բարի  
պիտի ըլլան, ու անեղեկն ալ պիտի յաջողին: Ու  
հոգաբարձուներ, բարակներ, ու մանաւանդ  
գունձապետներ պիտի եղան անոնց մեջէն, որոնք  
իրենց երջանկայիշաստի մեծ հօրը չափ ազգասեր  
պիտի ըլլան ու եկեղեցասեր: Բանաստեղծ ու վար-  
դաստեղծ անոնց հոգուն պատարագ պիտի մատու-  
ցանեն: Ու օրհնեցիկներու մեջ, յուսերու մեջ պի-  
տի պատկին միշտ:

Երակ՝ անոնց:

Որովհետեւ անոնց համար է երկիւնքի ար-  
ֆայութիւնը, երբ ո՛վ ճանճարանն դրակին պա-  
տիւններէն ու հողին սարտար աղջիկներէն . . . :

Ե Ա Յ Լ Օ Ք

Յ. Գ. — Դարձեալ անտեղի ու անճիշդ  
մեկնութիւններու տեղի չտալու համար պիտի է  
յայտարարել որ վերի յօդուածիս մեջ մասնաւոր-  
ապիս կակնարկել ինքզինքիս: Արդեւ երբեք  
մտքս չեմ սնուցուցած տեղական կարգ մը անճ-  
նականութիւններու հետ զբաղեցնելու, ասոր համար  
պիտի եղածէն անելի փափկանաշալ ըլլալով:  
Չեմ ալ ուզեր կողոպտել հեղինակի իրաւունքնե-  
րը իմ ֆիկսիւնդի ու «ստաստիկի» Գարբելեան  
բարեկամիս որ — Արտեկեանի ու Նանաստեղծի  
իր վրայ դրած շքանշանն սակ — պատաստելու  
միայն է ընդարձակ ուսումնասիրութիւն մը որ հա-  
տորի ձեռով ու «Հայ Գաղութ մը» տիպարով  
պիտի երեւի ֆիլ ասեցեան, եւ ոչ մէկերնիս մոռ-  
ցուած ըլլալու բարեբաղդութիւնը պիտի ունենանք:

Այս հաստի ձի պիտի դրկուի մեր բոլոր  
բաժանորդներուն:

ՔՐՈՆԻԿ

ԱԿԱՄԱՅ ԽՕՍՔԵՐ

Թերեւս քիչ մը զարմանաք, եթէ ձեզի ըսեմ թէ յարձակումներ, նոյն իսկ նախատինքներ կուզուին կոր մեզի երբեմն, որոնց գոհակութեան ու մտքի չքաւորութեան առջև՝ պէտք եղած բարի կամքը կը պակսի մեզի՝ պատասխանելու համար, թէեւ, շիտա՛կը, կոխէ փախչողներ չենք:

Խօսքս այն մէկ երկու սրիկաներուն համար չէ որոնք՝ իրենց տիրացուի անկարողութեանը մէջ կատղած՝ ուզեր են իրենց տխմարութեան վրէժը առնել մենէ՛ լուսանցքին վերայ իրենց տգեղ ու ցած հոգիին մաղձը փախելէ վերջ՝ ետ դարձնելով մեր թերթը. ոչ ալ սա միւս ոչ նուազ անբարոյական ցաւազարին որ անստորագիր նամակով մը ուզեր է մեզի իմացնել հայերէն ուղղագրութեան իր հրաշալի տգիտութիւնը: Չէ՛, վախկոտներու եւ վատերու հետ գործ չունինք:

Բայց ի՞նչ ըսել, օրինակի համար, Շարժումի Փամբ - Արշաւիրին պէս վարնոց իմաստակի մը որ կը կարծէ վիրաւորել մեզ՝ «անծանօթներ» կոչելով Վաղարշ Աւարի խմբագիրները: Անծանօթներ՝ սիրուն ու թելադրական բառը՝ խրոսիկի այդ անարգ բերնին մէջ: Այո՛, անծանօթներ ենք ու սկսնակներ, թէեւ մեր մէջ մէկէ աւելի ըլլան գրական գործունէութեան պատիկ բայց լեցուն անցեալ մը ունեցողներ. բայց հարցուցէք մեզի թէ պիտի ուզէի՞նք փոխել մեր համեստ Տեպլին, մեր անդրանիկներուն աղքատ հասունութեանը հետ:

Ի՞նչ ըսել նոր - Դարի Բարիգեան ռասքա թղթակցին որ, երջանիկ միամտութեամբ մը, մոռնալով իր ուսանայ մը ըլլալը՝ ճղակտոր եղեր է քիչ մը սրամիտ ըլլալ ուզելով մեր թերթին չուրջը:

Ի՞նչ ըսել Արմենիայի Մանչեսթրցի տէրպապա - Անաչառին որ կրօնական վայրագութեամբ մը կը պահանջէ իմ նահապետ ու Արսէնեան բարեկամներէս որ չլթայակապ բնեն զիս, եւ որուն «յերկնից մաղթած շնորհին» անհամբեր կը սպասենք «ես եւ նմանիքս»:

Անշուշտ մեր մտաւորական գերազանցութեան գիտակցութիւնը — ասիկա կըսենք առանց շատ կարմրելու, իրենք ալ, վերջապէս, կը զգան ասիկա, եւ արդէն ատ է մանաւանդ մեր էն մեծ ոճիրը որ երբէք չպիտի կրնան ներել մեզ — մեր մտաւորական գերազանցութեան հպարտ գիտակցութիւնը՝ անկարողներու, միջակներու եւ տխուր ռաթեներու այդ արջառին վրայ՝ կրնար հրաժարիլ, պզտիկ ճիգով մը, զանոնք պապանձեցնելու եսական գոհացումէն. բայց միամիտ ու անզրագէտ ամբօխին համար — որուն կոյր բնազդները, նախապաշարուած միտքը ու չիտթ հոգին կը շահագործեն անոնք — պիտի կուլ տանք երբեմն մեր արհամարհանքը ու պիտի լսեցնենք աջ ու ձախ մեր խոշոր, սառեցնող քրքիջը, բայց քիչ մը ակամայ, կը խոստովանինք, որովհետեւ մեր հեգնութիւնը հասկնալու անգամ անկարող պիտի մնան միշտ անոնք:



Աւելի ներողամտութեամբ պիտի ուզէինք պատասխանել ապահովարար Բարիզի «Ակումբ Հայ Ուսանողաց» ի այլանդակ շըրջաբերականին — ուր անակնկալ ու անբացատրելի նախատինքը կրնան մեզի՝ «զուտ կուսակցական թերթ» կոչելով Վաղարշ Աւարի — այն պարզ պատճառին համար որ մեզի տարեկիցներու, երասարդներու, ուսանողներու պիտի ուղղէինք մեր խօսքը: Բայց մեզի որչափ որ ծանր գայ իրենց վիրաւորիչ ըլլալ ստիպուելնիս՝ չենք կրնար ուրանալ անկեղծ խնդուքի վայրկեանը զոր ունեցանք կարգալով իրենց անգիտակցութեան, իմաստակութեան ու ծիծաղելի ու անարգարանալի յաւակնութիւններուն գլուխ գործոց՝ այդ շրջաբերականը զոր գրելու ու մեզի ալ զրկելու անգաղտնապահութիւնը ունեցեր են, մեր բարեկամներէն Մազսուտ Միհրդատեանցի — օ՛, ուսանայ մը չը կարծէք — Բարիզի «Ուսանողական Միութեան» վերջին հանդէսին արտասանած մէկ բանախօսութեան մէջ Անահիտի հետ Վաղարշ Աւարի — ա՛հ, որչափ գգուական — յիշատակութեանը առթիւ:

Բայց փութանք հատուած մը դնել հոս այդ շրջաբերականէն, գաղափար մը տալու համար մեր եղբայրակիցներուն ողբալի մաքի

վիճակին վրայ.

« Ակումբ Հայ Ուսանողաց լինելով ուսանողներու ձեռներեցութեամբ կազմակերպւած մարմին մը՝ յիշեցնելէ վերջ որ ուսանողութիւնը ըլլալով մի ընդհ. հիմնարկութիւն(°) չէ կարող պատկանիլ ո՛ր եւ է կուսակցութեան եւ մի յնախառն ուղղութեան(°.)՝ լինի նա նոյնիսկ Անահիտական եւ Վաղուան Զայնական (քո՛յր թերթեր... օ՛հ որչափ), կը բողոքէ այդ պարոնի (Մագսուա Միհրդատեանցի) այնքան անպատեհ յայտարարութեան դէմ, որուն հետ համակերպումը կը նշանակէ նուաստացնել ուսանողութեան այնքան բարձր կոչումը(°.) — ծառայել ժողովուրդի ընդհանուր շահերուն եւ ջանք ու խնամք չ՛ղլանալ(°) զայն զարգացնելու բարոյապէս եւ մտաւորապէս: Ու ահա ուսանողութեան վրայ ծանրացող(°) պարտականութեան այսպիսի բարձր(°) ըմբռնումն է որ եղեր է(°) Ակումբի դաւանանքը... » :

Այս տաժանելի ու տարտամօրէն ուսահայ — Տէր Աստուած, մինչեւ ո՞ւր պիտի հասնի ատոնց արշաւանքը — շառապիսին առջեւ խնդուքի դասական պէտքերնիս գոհացնելէ վերջ սակայն վհատութեան վայրկեան մը ունեցանք, հարցնելով ինքզինքնուս. « արդեօք ամենքն ալ այսպէ՞ս են », ու անձկագին՝ « արդեօք տաճկահայեր ալ կա՞ն ատոնց մէջ », ինչպէս գուշակել կուտար շրջաբերականին երկզխմի ոճը:

Չէ՛, չխնդանք. ասիկա շատ կսկծալի հաստատում մըն է ընդհակառակը, — այդչափ թանձր անգիտակցութիւն, մտաւոր զարգացումի ատանկ մտեցնող պակաս մը, սա հսկայ ու խանգաղառ տխմարութիւնը՝ քսանը հինգէն երեսուն քալող խոշոր տղաքներու քով, որոնք ուսանող ալ են... Բարբ՛լ:

Ու չեմ կրնար բռնել ինքզինքս պոռալու ատոնց երեսին. — Չէ՛, տղաքս, չէ՛, « ուսանողութեան բարձր կոչումը » մուտացածնիդ « ազգին ընդհանուր շահերուն ծառայել » չէ՛. ուսանողութեան միակ « կոչումը » — եթէ այս բառը կուզէք անպատճառ գործածել — քան տորվի է, կը հասկնա՞ք, ԲԱՆ ՍՈՐՎԻ, — աւելի մեծ գիրերով գրե՞մ, — բժշկութիւն, երկրագործութիւն, ղեղադործութիւն, իրաւագիրութիւն կամ որ եւ է « ութիւն » ով վրջաւո-

րող բան մը սորվիլ է ուսանողութեան յիշակ ու տրամաբանական « կոչում » ր: Բան մը սորվելէ վերջը, հետեւաբար ուսանողական շրջանը աւարտելէ վերջն է յիշայն որ — եթէ ուզէք, եթէ ատոր կարող ըլլաք մասնաւանդ — պիտի փութաք « ծառայելու ժողովուրդին ընդհանուր շահերուն », թէեւ այս ֆոռազնիդ ալ յստակ բան մը չնշանակէ:

Բայց եթէ կը կարծէք կոր որ Բարիզի մէջ ուսանող եղած միջոցնիդ անգին ծառայութիւններ մատուցանելու վրայ էք ազգին՝ կը խրատեմ ձեզի Տօք. Քօլօլեանի խնամքներուն զիմելու անյապաղ ու վա՛յ ան ազգին գլխուն որ իր յոյսը ձեր վրայ պիտի դնէր:

Կապահովցնեմ ձեզի թէ հրճուանքով չէ որ կըսեմ կոր այս խօսքերը: Բայց եթէ՛ փոխանակ տարամերժօրէն ձեր դասերուն աշխատելու՝ միտքերնիդ զրած էք ժամանակնիդ ըսպաննելու պուրլառներուն վրայ սլքտալով եւ ձեր Ակումբին փառքը երգելով՝ գոնէ նայեցէք որ, երկու պօփի մէջտեղ, քիչ մը ֆռանսերէն սորվիք, որովհետեւ մէկէ աւելի են ձեր մէջը անոնք որ 4-5 տարուան դասընթացքի մը համար ասաք տարի Բարիզ ուսանող ըլլալէ ուտասը Ակումբի մասնակցելէ վերջը՝ դեռ ֆռանսերէն երկու բառ չեն կրնար շնորհքով քովէ քով դնել. ասիկա չարգիլեր զիրենք անշուշտ որ ասանըմէկերորդ տարին դաշնակցական ներկայացուցիչ մը չըլլան, օրինակի համար, ու « կենտրոն » էն շոայլուած կլորիկ թոշակի մը փոխարէն իրենց ճաթած հոետորութիւնը ու անագորոյն մօրուքին փառքը չը պտոցնեն Պիւլիէէն մինչեւ Մուլէն Ռուժ:

Ու ասանկ խլեզներ են որ գլուրին լըբբութիւնը կուռենան կոր մեզի « կուսակցական » կոչելու, խնամոտաբար մոռնալով յիշել ո՞ր կուսակցութեան պատկանելնիս:



Մենք կուսակցական:

Կատակը քիչ մը անակնկալ էր, պիտի հաւանիք, ճիշդ այն պահուն երբ դժգոհութեան տրտունջներ ու « խպառ լուծեան » ըսպառնալիքներ կը հասնէին մեզի, մեր հակակուսակցական շեշտուած ձգտումներուն համար:

Անցողակի ըսենք որ դաշնակցականներու կողմէ մեզի ու մեր բարեկամներուն եղած

այս ծիծաղելի ու նողկալի սպառնալիքները չեն սարսափեցնել մեզի, թէեւ այդ մարդիկնե-  
րը որոնք հանրածանօթ ոճրագործներ կը պա-  
հեն մէջերնին իբրեւ «ընկեր», այդ մութին  
մէջ ու կռնակէն զարնող կտրիճները ամէն  
վատութեան կարող ըլլան:

Մարտիրոսեանի այս էջերուն մէջ երեւ-  
ցած մէկ յօդուածը սակայն կարգ մը արտունջ-  
ներու եւ դիտողութիւններու առիթ տուաւ ու  
րոնց յտակ բացատրութիւն մը աւելորդ չէ:

Ռամկօրէն կը սխալին անոնք որ հսկա-  
յեղափոխական կը կոչեն մեզի: Մենք հակա-  
յեղափոխականներ չենք կրնար ըլլալ, աճա-  
պարենք ըսելու, այն պարզ պատճառին հա-  
մար որ մեր մէջ — Զէյթունի հոյակապ խը-  
ռովքէն զատ — բնա՛ւ, բնա՛ւ, բնա՛ւ յեղափո-  
խութիւն ըսուած բանը գոյութիւն չէ ունե-  
ցած: Ապշեցէ՛ք որչափ կուզէք, բայց անմի-  
ջապէս վերջը գործածած բառերնուդ իմաստը  
սորվեցէք: Ազգային ճշմարիտ յեղափոխութեան  
չարժու մը ոչ միայն գոյութիւն չէ ունեցած,  
այլ բացարձակապէս անկարելի է մեզի համար,  
միջավայրի ու պայմաններու բազմազանի ու  
անողորք պատճառն ըով. այս տարրական ճըշ-  
մարտութիւնը չըմբռնելու համար եզականօրէն  
անկարող ըլլալու ենք տրամաբանելու:

Մարտիրոսեան սքանչելի կերպով ըսած  
էր սակայն իր յօդուածին սկիզբը, մեր խո-  
րունկ ու ջերմեանդ զգացումները Յեղափո-  
խութեան գաղափարին համար: Ո՞վ են այդ  
մարդիկները որ ելեր են՝ ժողովուրդի մը ա-  
զատութեան տենչանքին է՛ն ազնուական այդ  
արտայայտութեան պաշտամունքը ուսուցանել  
մեզի — ազատութեան խելագարներ:

Ի՞նչ մը աւելի համեստ ըլլանք հիմա,  
ու ցոյցերու վրայ խօսինք, եթէ կուզէք: Մար-  
տիրոսեան հաստատեր էր, անգութ տրամա-  
բանութեամբ մը, թէ Պապ-Ս. լիի յուսահատա-  
կան ֆիսակօէն վերջը, ու անոր տհարկու ար-  
դիւնքին առջեւ, ա՛լ աններելի էր կրկնել այդ  
աղիտաւոր ցոյցերը, որչափ որ ալ առիթ տա-  
լին անոնք անհատական դիւցազնութեան սըխ-  
րալի ապացոյցներու, որոնք մեր է՛ն զուտ  
հպարտութիւնը պիտի մնան, երբ խորհինք  
մանաւանդ սա ժեօն - Թիւոյ ըսուածներուն ու-  
րոնք՝ պեխին մէկ թելը անգամ զոհելու կա-  
րող հերոս մը չկրցան զեռ ունենալ:

Հակայեղափոխակա՞ն ենք դարձեալ երբ  
կրանք թէ՛ արտասահմանի մէջ՝ յեղափոխա-  
կան կուսակցութիւն մը — նոյն իսկ խղճա-  
միտ ու պարկեշտ — չի կրնար գոյութեան  
ո եւ է իրաւունք ունենալ ու պարզապէս հըս-  
կայ անհեթեթութիւն մըն է: Պէտք է որ  
հասկնաք վերջապէս ասիկա: Ո՛ւր է միջավայ-  
րը, գործունէութեան գաշտը. ուսուցիկ ճա-  
ռերով, լղրճուկ ու անիմաստ կոչերով չէ որ  
յեղափոխական գաղափարներ — ու միայն գա-  
ղափարական գործունէութիւն մը կրնայ ար-  
գարանալ — պիտի կրնային արմատ գտնել  
աղբի մը թանձրախուռն զանգուածին մէջ:  
Ու արտասահմանի Հայութիւնը երկրորդական  
կարեւորութիւն մը հազիւ կրնայ ունենալ:

Ու ժնէվի, Վատնաի կամ Աթէնքի մեր  
խոհարար-տիրացուները չեն սպահովաբար որ  
պիտի կարող ըլլային մասնակցելու այդ զե-  
րազանցօրէն մտաւորական պայքարին: Սիր-  
ւած զբազէտներու եւ հեղինակութիւն ունե-  
ցող ճայներու վրայ կը ծանրանայ ճշմարիտ  
ու լայնօրէն ըմբռնուած «վերածնութեան» այս  
կենսական գործը զոր արդէն մօտաւոր անց-  
եալի մը մէջ սկսաւ ու վեց տարի անգնահա-  
տելի կորովով մը շարունակեց այն կարմիր-  
յեղափոխական թերթը որ Հայրենիք եղաւ:

Յեղափոխական խելացի ու անաղմուկ  
գաստիարակութիւն մը մանաւանդ պիտի բա-  
րերար ըլլար մեզի եթէ զպրոցէն սկսէր ան  
արթնցունել մեր տղաքներուն մատաղ գի-  
տակցութիւնը ազգային ցաւերուն ու տեն-  
չանքներուն, ու ազատութեան վսեմ կրօնքին  
ջերմեանդ խօսքը ընէր անոնց. ու ասիկա՝ ո՛չ  
թէ մէյ մէկ «հերոս», սպազայ ցոյցերու հա-  
մար սխոլ ֆօնիստիս պատրաստուած ուժեր հաս-  
ցընելու համար, այլ Յաւին ու Ճակատագրա-  
կանութեան ժառանգութիւնովը հարուստ՝ ճըշ-  
մարիտ Հայութիւնը հոգիներ կազմելու  
համար:

Ռուսահայերը որ ամենէն աւելի «յե-  
ղափոխական» կարսածե՛ն՝ բարոյապէս ամենէն  
աւելի օտարացած ու էն նուազ Հայ տարրը  
կը կազմեն այսօր սպահովաբար մեր ցեղին:

\* \* \*

Հիմա, խումբ մը երիտասարդներ ենք մենք, կանգ առած վերջնական կործանումի ճամբուն մէջ ուր կը քալենք ազգովին, բռնի առաջնորդուած՝ ինքզինքնին յեղափոխական կոչող քիչ անգամ անկեղծ, յաճախ անձնամոլ ու գրեթէ միշտ կարծամիտ մարդերէ:

Ատոնք են որ «հակահեղափոխական» — ու վաղը թերեւս «մատնիչ», ի՞նչու չէ — կըսեն մեզի, երբ գառնօրէն գիտակից ազգային ճակատագրին սպառնացող ահաւոր վտանգին՝ մեր բողոքի ու զայրոյթի ձայնը կը բարձրացնենք այդ վտանգը փութացնող ու իրենց ոճրագործ ընթացքովը զայն անխուսափելի ընողներուն դէմ, այն միջոցին խկ որ անոնք, անբացատրելի նոր եռանդով մը, վերսկսել կը թուին — հակառակ արիւնի հետապնդող ու համոզող մղձաւանջին — իրենց գծնէ շահատակութիւնները:

Անոնց որ դեռ բան մը կը յուսան այդ մարդերէն, անշահախնդիրներուն ու անկեղծներուն կուզէինք ըսած ըլլալ գոնէ անգամ մը թէ վախկոտներ ու յետադէմներ չենք: Գտենք որ անիրաւութիւններու դէմ բմբոսացումը փառաւոր զգացում մըն է, ու մենք չէ որ անտարբեր պիտի մնայինք անոր խրոխտ ու տիրական ժայթքումին, բայց անիկա կը պզտիկնայ ու կը սգեղնայ երբ՝ ջախջախուած իր առաջին թռիչին՝ չի լռեր վեհ ու արգաւանդ համակերպութեան մը մէջ, ու կը հրէ, կը տանի մեզի հարիւր հազար գիակներու դաշտին քով ուր մեր քոյրերն ու եղբայրները կը ճանչնանք: Օ՛հ, այո՛, եթէ կարելի ըլլար մեզի անոնց վրէժը լուծել . . . բայց ասիկա Անկարելին է որուն առջեւ ամէն բմբոսացում Անիրաւութիւնը զուարճացնելու ու զանիկա աւելի անիրաւ ընելու միայն կրնայ ծառայել:

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵԻԵԱՆ

ԻԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՔՍՈՐԱՆԻԸ

Կոսրու՛ծ, կոսրու՛ծ, կոսրու՛ծ.  
Քաղաքներուն մեջ ու քաղաքներէն դուրս:  
Թագաւորները յայրուրթիւնով սքսրս կը դառնան՝

Հեռացող քաղաքներուն ետեւէ:  
Ազգաւերո թագուրթիւններ կանցնին վերէն Արիւնս քերտներով ու գիւնովի ֆրիջներով: Ցաւախախտ վր կիսաւերները կը խեղդէ. Ու սքսրաւերո անձայն կարտաւեր Ծսայով կանցնին ըսն անքաւերէն: Գիշերին մեջեւ արիւնի հոս վր կը բարձրանայ, Ծաւերուն հետ շարտաւեր ուրտագծերով. Ու սոսկուտով շեռներէն կը փախչին հարածած՝ Ոյխարները հեռուող խոտերուն վրայէն: Փողոցներուն մեջ մորթուած սերունդներ կը տեսնել

Ու արթոյններ բարեկեղտներէ դարձող: Արեւադարձային սաքոթիւն վր կը սարածուի Հրդեհի տրուած ազնուական քաղաքներէն: Ու մարմարի ծաւերթիւնով իջնող ձիւնի սակ Աւերակներո յուրթիւնը կը մսի: Մսիկ ըրե՛ք հոգեվարքներուն ձայները, վերջին ձայները,  
Հովին ձայնին հետ որ ծաւերը կը ցարդէ. Ու վիրաւորուած ըսնկային սակ՝ Սեւ մարդերուն աղօթները, վերջին խօսքերը, Որ անարտ մը երկայնքը կեանքին աքսորը կուրսն:

Օ՛հ, մի մօտեմա՛ք, մի մօտեմա՛ք, մի մօտեմա՛ք. Չըրչայ որ մօտեմաք գերեզմաններուն ու ծովուն. Ստուած ցուրի վրայ նաւեր կը տեսնել հեռուն, Մեռելներո կուսակաւներ անուց մեջ կան, Ու ցաւէն զարարող աղիքներուն վրայ Գանկեր, սրունքներ ինծի կերեւան: Մսիկ ըրե՛ք, մսիկ ըրե՛ք, մսիկ ըրե՛ք ֓ Փոքորկին ձայնը ծովուն աղիքներուն հետ. Կոսրու՛ծ, կոսրու՛ծ, կոսրու՛ծ:

Աղիւսները, հիւսակները, որբերը կը միսնան, Ու դսնդաղօրէն, տրտօրէն, սածակագիտօրէն, Ճերմակ հագուսներո մեջեւ Վիզերէին ծուած, խաչակնիքով Եկեղեցիին դռներէն ներս կը տանին: Մսիկ ըրե՛ք, մսիկ ըրե՛ք, մսիկ ըրե՛ք ֓ Ծուններուն ողբը հեռուոր գերեզմանատներէն: Օ՛հ, պատահաւները գոցեցե՛ք, ու այգերնիդ աչ, — Կոսրու՛ծ, կոսրու՛ծ, կոսրու՛ծ . . . :

ԱՏՈՄ ԵՍԻՃԱՆԵԱՆ

Բարից



Ծ Ն Ո Ւ Ն Դ Ի Ի Ր Ի Կ Ո Ւ Ն

Գէորգ չէր ուզած թողուլ իր սենեակը: Այդ իրիկունը կը մերժէր հրաւէր մը հայրենակից բարեկամներէ որոնք կառավարկէին իրեն միասին անցընել Երեկոյթը, հայրենիքի խօսքերով ու երգերով: Պանդուխտներու սըրտատուչ մտերմութիւնը վայրկեան մը փորձած էր զինքը, բայց նախընտրեց առանձնութիւնը. ինքնամիտփումի մէջ ուզեց տօնել Ծնունդը: Ու կը խորհէր այդպէսով աւելի հասկցած, աւելի սիրած ըլլալ զայն:

Փողոցը երթալով կողերէր. պուլվառին վրայ, ելեքտրական լոյսերով շողշողուն գիշերուան մէջ, բազմութիւնը կը վխտար: Ամենուրեք, խուլցընող մտունչը տօնական քաղաքին: Բայց Գէորգ անտարբեր կը լսէր հըրճուանքի ժխորը: Տարիին այդ օրը, իր աւանդութեան գեղեցկութիւնովը՝ տարբեր յուզումով մը կը բորբոքէր անոր խանդավառ հոգին: Ըմբռնելու համար Ծնունդի սքանչելի խորհրդանշանին իմաստը, հաւատքը անհրաժեշտ չէր իրեն. իր ազատ միտքը աւելի պարզ, աւելի խորունկ կը տեսնէր մարդկութիւնը յեղաշրջող մեծ դէպքին մէջ: Գէորգ կը սիրէր գեղեցիկ բնագանցութիւնները, բանաստեղծական աւանդակէպերը, մարդկային իմացականութեան բեղմնաւոր ճիգերը: Ինչպէս բարոյականի մեծ վարդապետին կեանքին կապակից ամէն դէպք, Ծնունդը՝ որուն հաւատքը այնքան անուշ ու մխիթարող եղած էր աշխարհիս զրկուածներուն, յարգանքի ու սքանչացումի կը առիպէր զինքը: Ու ժամանակակից տեսլապաշտութիւնը, անձանօթի այս շերտ ծարաւը որով լեցուեցան դարուս մեծագոյն հեթանոսները, զաւակը չէ՞ր միթէ քրիստոնէութեան: Այս օրուան խոհուն ու գիտակից միսթիքականութիւնը նոր փթթում մը չէ՞ր միթէ հին հաւատքին աւերակներուն վրայ: Ու Գէորգ խորհեցաւ. թէ՛ եթէ բոլոր նախապաշարունակներուն մէջէն որոնք կը յաղթէին էն ուժով տըրամաբանութեան ու կապրէին մեր մէջ, հակառակ ու ընդդէմ մեզի, հաւատքը էն չարչրկողն էր, անոր համար է որ անիկա օտար չէր մեր իսկական ձգտումներուն. որովհետեւ մեր մէջն իսկ էր ու հզօր առնչութիւններ ունէր այս շրջանին անհանդարտ հողիին հետ:

Ծնունդ: Յիշատակի օր մըն ալ էր ատիկա: Ողձմտանքի դատաստաններու, լռիկ խոստովանութիւններու եւ ինքնաճանաչութեան օր մը: Վերադարձի օր մը դէպի անցեալը, դէպի սիրելի մեռելները: Ծնունդը որ կը խոստանար բարութեան տիրապետումը աշխարհիս վրայ, մեղմօրէն խոկումներու կը մղէր մարդը, կարթնցնէր Չարիքի արիւնստ խնդիրներ:

Ու վառարանին մեղկ ու գգուող ջերմութեանը առջեւ, բազմոցին անկիւնը, զլուխը անփութօրէն խոնարհած իր կուրծքին վրայ. Գէորգ երազեց: Հեշտօրէն գոցեց իր աչքերը ու մտիկ ըրաւ անցեալի ձայնը որ կը բարձրանար իր էութեան խորէն:

Գէորգ այն խանդավառ ու անհանդարտ հոգիներէն էր որոնց համար սէրը էն անդիմադրելի ու տիրական պէտքը եղաւ, հարկադրուած իրենց խառնուածքին բնութենէն իսկ: Սրտաբաց մըն էր որուն համար բարոյական առանձնութիւնը չարչարանք մը կը ըլլար, եւ որ անկարող ինքզինքին բաւելու, չճանչցաւ երեք անտարբերութեան եսասէր հաճոյքը: Ոչ թէ օտար էր իրեն պաշտելի դառնութիւնը անձնուրացութեան, բայց Գէորգ չատ զգայուն էր կարող ըլլալու համար փնտռել երջանկութիւնը իրականութենէն զուրս, միմիայն մըտաւորական կեանքի մը մէջ:

Այսպէս Սաթենիկ եղաւ իրեն համար երազուած սիրելի էակը, եւ որուն իր քով ներկայութիւնը ցաւագին պարապ մը լեցուց իր մէջ: Հինգ տարի առաջ, աշնան ազդոր իրիկուն մը, պատահած էր անոր: Չէր կրնար ըսլ թէ ո՞ր եւ ի՞նչպէս: Տաբտամօրէն կը յիշէր Պօլիսի էն գեղեցիկ անկիւններէն մէկը, անոր առաջին ժպիտը, ու իր զմայլանքի ու անձկութեան առաջին տպաւորութիւնը:

Սաթենիկ տժգոյն ու վտիտ աղջիկ մըն էր, զրեթէ իր տարիքը, կարծես միշտ ցաւի մը յաճախանքովը մտահոգ: Անոր դէմքը թէեւ չունենար կատարեալ գեղեցկութիւն մը, կարտայայտէր սակայն չես գիտեր ինչ կախարդիչ անուշութիւն մը որուն անդիմադրելի ազդումը կրեց միշտ: Լայն ու մաքուր ճակատը, չիկագոյն ազդոր մագերու տակ, կը բացատրէր ըս-

քանչեւի իմաստութիւնը, անպատում վճիտութիւնը իր հոգիին: Ու իր աչքերը, օ՛հ, այդ մութ ու հեռուոր աչքերը որոնց տրտմութեանը առջեւ յաճախ, խենդի պէս լացած էր Գէորգ, ամբողջ մարդկութիւն մը կը կարգացուէր հոն, անոնց գորովալից ցոլքին մէջ: Ու հըրաշալի մերկութիւն մը, տժգոյն սաթէ մարմին մը, հեշտագիւնօրէն սարսուզին ու ճապուկ, քանդակուած ձեւին բացարձակ կատարելութեանը մէջ:

Սաթենիկ մեծ իմացականութիւն մը չէր. զգայնիկ մը եղաւ ամէն բանէ առաջ: Այս հազւագէտ խառնուածքին մէջ, ֆիզիքական հըրապոյրը կը միանար բարոյական անաղարտ գեղեցկութեան մը: Անուշ, հիւանդագին էակ մըն էր, ու բարի: Ու Գէորգ զայն սիրեց ասոր համար իսկ, անոր երազագին բնութեանը, անոր գորովանքի զօրութեանը համար:

Այսպէս զիրենք միացնող կապը հոգեկան եղաւ մանաւանդ: Իրենց սիրոյն մէջ նըկատեցին մանաւանդ իրենց խտէալին նոյնութիւնը: Ոչ թէ զգայասիրութիւնը նուազ ուժով խռովեց զիրենք, բայց հեշտութեան վայելքը երբէք չեղաւ իրենց տենչանքներուն նըպատակը, այլ միջոցը՝ հասնելու համար աւելի բարձր վախճանի մը, իրենց հոգիներուն միութեան: Ու սիրոյ երկայն գիշերներուն մէջ, երբ Սաթենիկ ինքզինքը կը յանձնէր իր սիրականին՝ երկու ամբողջ գոյութիւններ էին որ կը տիրէին իրարու, կը հալէին միսթիքական գիտութեան մը մէջ:

Ունենալով ձգտումներու բացարձակ նոյնութիւն մը, ու բարի ու անսահման ներողամտութիւն մը իրարու համար, երբէք չվիրաւորուեցան կեանքի ճանձրոյթներէն: Իրենց սէրը յաղթեց ամէն բանի: Օրուան մէջ չէին տեսներ զիրար, նիւթական դժուարութիւններ զանոնք ստիպելով երկուքն ալ աշխատիլ: Սաթենիկ կը վազէր իր դաշնակի դասերուն. Գէորգ կ'աշխատէր օտարական ընտանիքի մը քով իբրև պատմութեան ուսուցիչ: Կեանքի պայքարին հանապազօրեայ ճիգը ճանչցուց անոնց խղճմտանքի էն անուշ գոհունակութիւնը: Իրենց սէրը, մաքրուած առաջին օրերու ախտաւոր երանգէն, առողջ ու ներդաշնակ եղաւ, ու փոխանակ անգամալուծելու իրենց կամքը աւելի գրգռեց զայն: Ինքզինքնին միշտ պատ-

րաստ զգացին ամէն փորձութեան, ամէն զըրկանքի: Ամբողջ օրը, սիրուած դէմքին յաճախանքը սիտիեց իրենց յոգնութիւնը, ու ամէն իրիկուն տուն վերադարձին, այնքան անձկագին, այնքան երջանիկ եղան որքան առաջին ժամադրութեան մը:

Ամէն իրիկուն անվերջանալի պտոյաներ կընէին ամայի եւ անուշ վայրերու մէջ: Պօլիսի դիւթական բնութեանը առջեւ, աւելի սիրեցին, աւելի հասկցան զիրար: Ու ամբողջ տարի մը ճանչցան գերագոյն երանութիւնը որուն մարդկային էակ մը կարող ըլլար հասնելու: Ոչ մէկ վայրկեան, այս անձնուիրութեան ու գուրգուրանքի կեանքը վրդովուեցաւ. ոչ մէկ վայրկեան կորսնցուց իր առաջին օրերու մաքրութիւնը:

Իայց ճակատագիրը դատապարտեց զանոնք:

\* \* \*

Յաճախ, իրենց երջանկութեան անուշ վայրկեաններուն, տառապեցան տաժանելի նախազգացումէ մը: Ասիկա անձանօթ ու տարտամ սպառնալիքի տպաւորութիւն մըն էր որ միակ դառնութիւնը եղաւ իրենց երկուքի կեանքին. անբացատրելի անձկութիւն որուն վրայ երբէք չխօսեցան իրարու, բայց ուսկից տառապեցան լսիկ կերպով: Իրենց սրտին ցնձութիւնը շատ մեծ էր, շատ ազնիւ՝ յախտենական ըլլալու համար: Բնութեան մէջ, էն մութ նիւթակա նութեանէն մինչեւ կեանքի էն վսեմ փթթումը, Չարիքը կը տիրէր, պէտք էր տիրէր. ամէն տեղ, ամէն գեղեցկութեան, պէտք էր քայքայումին չարաշուք ներդաշնակութիւնը:

Ու այսպէս եղաւ: Եղբրական վայրկեանը հասաւ օր մը յանկարծ, անակնկալին ամբողջ սարսափովը, զգեստնելու համար զանոնք: Վախճանը՝ հետեւանքը չեղաւ վիպային իրադարձութիւններու, կրքի ողբերգական պայթումներու, այլ պարզ ու մարդկային Մահը:

Հոկանքերի իրիկուն մը, Սաթենիկ տուն վերադարձաւ ջղային սարսուռներու մէջ, ճակատը տենդէ հրավառ: Անկողնի ծառայեց, տառապեցաւ անլուր չարչարանքներով. իր մարմինը յուսահատօրէն պրկուեցաւ ահաւոր գալարումներու մէջ, ու բոլոր ցաւերէն աւելի իր սիրականին մերձակայ մենութեան մտածումը

նահատակեց զինքը: Ու իրենց ամբողջ մաքա-  
ռումը մահուան դէմ, իրենց գերմարդկային  
ճիգը անզօր եղաւ ճակատագրին առջեւ:

Սաթենիկ, արհաւիրքով լեցուն օրերէ ետք,  
յանկարծ, առտու մը, քիչ մը հանդարտութիւն  
զգաց: Օրհասի սփոփանքը քնացուց իր տան-  
չանքները, ու լռիկ, անշունչ, մեռաւ Գէորգի  
բազուկներուն մէջ...:

Ծնունդի այդ իրիկունը, անցեալին ցա-  
ւագին վերակենդանացումը անձկութիւնով  
սեղմեց Գէորգի հոգին: Հինգ երկայն տարիներ  
կը բաժնէին զինքը, էն անկող տառապանքի ու  
միանգամայն էն սքանչելի երջանկութեան այդ  
անմոռանալի օրերէն: Որքան հեռու էին անոնք  
հիմա, ու ինչ որ կը մնար իր սրտին մէջ, իր  
երբեմնի երանութենէն, կարօտի կսկիծն էր, ու  
դառնութիւնը իր վատնուած երտասարդութեան:

Դուրսը, փողոցին մէջ, խուժանը կը շա-  
րունակէր բարձրացնել, աւելի աղմկալից ոգե-  
ւորութիւնով մը, իր ցնծութեան մոռնջը: Զին-  
քը չըջապատող մարդկութեան այս հակադրու-  
թիւնը աւելի խռովեց իր հոգին, ու ալ աւելի  
մինակ զգաց ինքզինքը, իր տառապագին ա-  
ռանձնութեանը մէջ: Դողդալով սաքի ելաւ,  
գնաց նետուիլ իր անկողնին վրայ, ու հոն գը-  
լուխը իր ձեռքերուն մէջ պահած, երկարօրէն,  
ջերմոռանդօրէն, արտասուեց:

ԼԵՒՈՆ ԱՐՍԷՆԵԱՆ

Ս Պ Ա Ս Ո Ւ Մ

Ինծի կողայ որ կը սպասեմ  
Երբեմն, անձկոս, բանի մ' սուրաւ  
Ձոր չեմ գիտեր, որուն դժխեմ  
Կեանքին սակայն կը հաւասար:

Ինծի կողայ որ, շատ գիշեր,  
Պատասխանի կը սպասեմ, շուռ,  
Հարցումի մը գոր չեմ յիշեր  
Ե՛րբ ըրած եմ, որո՞ւն եւ ո՞ւր:

Ու կը խորհիմ թե Կեանքն անբողջ  
Սպասումն է մեծ սարսուռի  
Որ կը ցնցե խեղճ մարդը ողջ,  
Թաւալեղով զանի լրոյն  
Սեւ անդունդը Անեռութեան  
Մէջ սկըսող սպասումի:

Ս Ա Վ Ի Թ Ի Ի

ՀԱՅ ՏԱՌԱՊԱՆՔԻՆ

Ք Ր Ի Ս Ս Ը Ս

Միս մինակ կերթայի անվերջ ճամբա-  
ներէն: Քաղաքը ամբողջ իրարանցումի մէջ էր:  
Տօնազգեստուած մարդիկ, անթնուռ տակ ծը-  
րար մը, կաճապարէին ընտանեկան երեկոյթ-  
ներու: Յուցափեղկերէն ելեքդրական լոյսի ցո-  
փութիւն մը կը հոսէր մայթերուն վրայ ուր  
աղքատ աղջիկներ ու մանչեր՝ կանգ առած՝  
ցանկութեան վայրագ աչքերով կը սեւեռէին  
ցոյցի դրուած փայլուն ու պոռոտ առարկաները:

Սթրէնտին երկայնքը կը քալէի հիմա,  
արմկելով անվերջանալի տողանցումը ցըն-  
ծութեան աղջիկներուն, որոնք բռնի ու ցա-  
ւագին ժպիտով մը, կը հրաւիրէին անցորդնե-  
րը կասկածելի ու տրտում հեշտանքներու: Օ՛հ,  
Լօնտօնի սալայատակներուն վրայ ծախուած  
սէրը: Հոտ՝ ամէն տեղէ աւելի դժնդակ բան  
մը ունի ասիկա. ամէն երկիր, ամէն ժողո-  
վուրդ իր ինկած աղջիկները ունի հոտ, որոնք,  
այդ խոնաւ մայթերուն վրայ ու այդ ծած-  
կող, ստուերող մէզին մէջ, կերբան, կը մօտե-  
նան, կը հեռանան, կը քաշկոտուին, կը ծամա-  
ծոնեն, կը խնդան ու կուլան, ու կը համադրեն  
խոշոր, տգեղ ու ցաւագին պոռնկութիւնը:

Ախտագին տժգունութեամբ դէմքերու  
վրայ՝ ուխտքիէն ու ճինէն հրավառ աչքեր  
տեսայ, ու ծռած, պրկուած բերաններ որոնք  
կը ճգնէին հրապուրիչ ըլլալ:

Գինետուններու զոնները կը գոցուէին  
ու կը բացուէին, ու կիներ, կիներ, կիներ կը  
մտնէին, կելլէին անստոյգ քայլերով ու երե-  
րուն մարմիններով: Վայրկեան մը կանգ առի  
ու ներկայ եղայ քառմնելի տեսարանի մը. կին  
մըն էր, ցեխոտած լաթերով, թափթփած մա-  
զերով, կապոյտ խոշոր աչքերով, նիհար ու եր-  
կայնահասակ կին մը, զոր հրմշտկելով դուրս  
կուղէր նետել զինետան մը գոնապանը, ու  
ցնծուհին, իր արբենալու անյագ տենչանքին  
մէջ խենդեցած՝ կը մաքառէր, կոռնար հուժկու  
անասունին դէմ որ կարգիլէր զինքը զինե-  
տան սեմէն անցնելու, եւ որ՝ ճարահատած ու  
անգութ՝ բռունցքի վերջին հարուածով մը  
մայթին վրայ գլորեց խեղճ արգահատելի է-

ակը: Աչքերս գոցեցի սարսուռով ու ճամբաս շարունակեցի:

Քանի մը քայլ անդին հանդիպեցայ կըքած, գառամած պառաւներու որոնք տքտքալով կը շտապէին, սրտերնուն վրայ ամուր բըռնած իրենց ճըլկերը, դէպի մերձակայ գինետունները: Օ՛հ, այդ ծեր, խման կնիկներուն ահարկու տեսիլը: Անոնցմէ մէկը, արդէն քալելու անկարող ըլլալու աստիճան գինով, ազամանդավածառի մը լուսաւոր ցուցափեղկին կռթնեցաւ, ու հանդիսաւոր խաղաղութեամբ մը, անհամար անցորդներու անտարբեր — անգլխական անասունի անտարբերութիւնը — նայւածքին սակ, հինգ վայրկեան, ոտքի վրայ, հեւալով միզեց:

Ու կը քալէի, կը քալէի:

Թռաֆալկառ սքուէոր կառքերով ու օմնիւպիւսներով խափանուած էր, ու Նէլանի կռթողը՝ որ ցորեկին նեղացուցիչ խրտուխակի մը զգայութիւնը կուտար ինծի՝ հիմա, այս ազմուկներուն ու լոյսերուն մէջէն բարձրացած՝ անսահման ու տզեղ քաղքին վրայ աստուածացումի խոյանք մը կառնէր:

Այդ խուլ ազմուկէն ու լոյսէն հետապնդուած, հալածուած՝ հանդարտ փողոց մը նետեցի ինքզինքս ու քայլերս սկսայ արագել:

Պահ մը վերջը, հասած էի Ուէսդմինսգրի եկեղեցիին քով որ կէս մութին մէջ իր քանդակներու երազը կուրուագծէր: Խաղաղութեան կայքն էր հոտ, ինքնամփոփումի ու խոկմունքներու անկիւնը: Մահուան, սակաւթիւ անմահ մեծութիւններու ու անհամար պաշտօնական անիմաստ փառքերու հիւրընկալ յիշատակարանին խորհրդաւոր ու թելադրական երևոյթը: Բայց անողոք իրականութիւններէ վըրդովուած հոգիս չէր կրնար մոռնալ, չէր կրնար յափշտակուիլ ու գինովնալ հրապուրիչ մտաւորականութիւններով, ու անոնցմէ չեմ որոնք կարող պիտի ըլլային իրենց ներսիդին որոտացող փոթորիկը լռեցնել՝ խորունկ ու կնճռոտ բնազանցութիւններու անինքնաբեր ու ստիպւած երազանքովը:

Ու բռնաւոր մղումէ մը հըրմշտկուած՝ կռնակս դարձուցի հոյակապ ու մութին մէջ կրկնապէս վեհափառ յիշատակարանին, ու վազեցի, վազեցի խեցի պէս, մինչև Թէյմզի եզերքները: Այնտեղ, այո՛, այնտեղ միայն կըր-

նայի կանգ առնել, ու քարէ պատին կռթնած հետեւիլ, տենդոտ աչքերով, պղտոր, փորձող հոսանքին այդ անարգ շուրերուն: Օ՛հ, մոզութիւնը անոնց, Քրիստոսի այդ իրիկունը, երբ հոգիիդ պարապը կը մտի, երբ պարտասած մարմինդ ալ չուզեր քալել, ալ չուզեր յոգնիլ, ալ չուզեր ճգնիլ, երբ սառած մատներդ իզուր կը փնտռեն կեանքին միջոցը, կեանքին պայմանը, կեանքը, կեանք-դրամը, ոսկի, արծաթ կամ պղինձ՝ գրպաններուդ դժնդակ պարապին մէջ. օ՛հ, կակուղ ու հեշտալի անկողինը անոնց. . . :

Նտիս, լայն պողոտային անդի կողմը, վանդակորմերով չըջապատուած պարտէզներու մէջ կը բարձրանային ապարանքները հարուստներուն, ուժովներուն, կեանքի յղիացածներուն, ու անոնց սեւ ու դաժան ցցումը՝ ըմբոստացումներուն էն արիւնտոտվը կը լեցնէր հոգիս ու եղեռնի կամէութիւններ կարթնային էութեանս խորախորներէն: Ունեւորները, ցա՛ծ ու նողկալի էակները, — ո՛վ մխիթարող զովացնող գինովութիւնը անէծքին ու միս մինակ քֆրելուն, — երբէք պէտք եղածին չափ ատելութիւն չպիտի կրնայինք ունենալ բաղդին այդ երես ելած զաւակներուն դէմ:

Այս անկարողի պարզող ու կարճ փիլիսոփայութիւնը կորոճայի ինքնիրենս, այլանդակ շարժումներով ստորագծելով զայն մութին մէջ, գիշերուան այդ ընթրիքի ժամուն, Թէյմզի եզերքը:

Բոլիամէն մը, քանի մը քայլ անդին կեցած, պաղ ու յամառ նայուածքով մը կը դիտէր դիս: Օ՛հ, այդ խոշոր, փայտէ մարդուն սառեցնող նայուածքը: Ու յանկարծակիի եկած, ամօթի ու անկարողութեան պաղ քրտինք մը սկսայ թափել, ու հեռանալու, խուսափելու անձկագին փափաքէ մը մտրակուած, անցայ պողոտայէն ու կողմնակի մանուածապատ փողոցներու մէջ մխրճուեցայ:

Ամբողջ ինկած մարդկութիւն մը կեռուզեաւոր այդ անարգ փողոցներուն մէջ: Բոպիկ ոտքով ու աղտոտ, սււցած դէմքերով լակոտներ կը տապալակէին ցեխին ու աղսեղութիւններուն մէջ: Ցած ու դժնետեսիլ տուններու բաց դըռներէն ահարկու կերպարանքով մարդիկ կը մըռնէին, կելլէին: Խոնաւ ու սեւ պատերուն երկայնքը այր ու կին գինուխերու բազմութիւն մը կը քաշկոտուէր, կը կռթնէր, կը գլտորէր,

կիյնար ու կելլար: Մութ անկիւն մը, կասկածելի գոյգ մը կը յամառէր պիղծ ու դժուարին յագեցումի մը մէջ: Ու այս բոլորէն մահացու գարշահոտութիւն մը կը բարձրանար, կը տարածուէր, կը խեղդէր:

Շունչս բռնած կաճապարէի: Պահ մը վերջը պարտասամ կանգ առի բաւական մաքուր քառուղիի մը վրայ:

\* \* \*

Փրկութեան Բանակէն վաչտ մը դիւցաղնական զինուորներ — մեծ մասամբ կաղ ու միաշնայ — իրենց յաղթական գրօշակը պարզած, խապոտ ու հրէշային երաժշտութիւնով մը կը թնդագնէին մթնոլորտը: Թմբուկներու, փողերու, ու արու եւ էգ ճաթած ձայներու խառնաշփոթ վայնասուն մըն էր:

Զօրապետը, հինգ վայրկեանը անգամ մը, լռեցնելով երաժշտութիւնը, հնչական ու մարտագոռ ձայնով մը կը հրաւիրէր խուժանը հետեւելու իրենց դէպի մօտակայ ժողովասրահը:

Ու բազմութիւնը կը ստուարանար հետըզհետէ: Անցորդներ, աննպատակ ու կասկածելի մարդիկ կանգ կառնէին արի զինուորներուն շուրջը: Հետաքրքիր, երբեմն հեզնոտ ու անպատկառ, յաճախ երկիւղած դէմքերու շաղապատում մըն էր:

Ճամբայ ելլալու պատրաստուելով, վերջին անգամ մը, որոտաց զօրապետը իր տիրուկան հրաւէրը:

- Եկէ՛ք, եկէ՛ք Փրկութեան Բանակը:
- Ու գլխու խրոխտ թօթուռածքով մը՝
- Հայե՛ր ունինք այս գիշեր ցոյցի դրած:

\* \* \*

Անհամբեր, ու մղուած արդէն խուժանին հոտանքէն՝ ներս մտայ ժողովասրահէն: Քառանկիւն ու անճաշակ շէնք մըն էր զոր կը լուսաւորէին բազմաթիւ անապակի կաղաքերաններ, սօնալաճառի ընդարձակ պառաքի մը երեւոյթը տալով անոր ու յիշեցնելով մանաւանդ գտնադիտի մը ներքնակողմը ուր ցոյցի գրուած հետաքրքրական կենդանիները՝ հինգ փախըտական ու չքաւոր Հայեր պիտի ըլլային:

Բեմին վրայ, քով քովի նստած էին անոնք, գլուխնին կոր, արգահատելիօրէն խոնարհ երեւոյթով մը ուր պզտիկնալու, աւրուե-

լու բուռն ճիգ մը կը մատնուէր:

Բազմութիւնը, միշտ աւելի հոծ, կը լեցուէր սրահին մէջ ուր պահ մը վերջը գրեթէ ակտիվ չէր մնար: Ու նայուածքները, օ՛հ, այդ նայուածքները որ կը սեւեռուէին դէպի բեմը, այդ զուարթ, գրեթէ երջանիկ նայուածքները ուր շահադրգոռած, զուարճացած ամբոխի մը եսական հոգին կը խտանար . . . :

Հակիրճ ու մրթմրթուած աղօթքէ մը վերջը, դուրսի խապոտ երաժշտութիւնը վերըսկըսաւ յանկարծ, աւելի ուժգին, աւելի յամառ: Ու սահմրկած, սարսափած՝ ներկայ եղայ անլուրտեսարանի մը: Բեմին վրայ Փրկութեան Բանակին զինուորները սկսան պարել սաղմոսերգելով . . . :

Աներեւակայելի, դիւային պար մըն էր ասիկա: Անոնցմէ ոմանք, իրանի այլանդակ երբրոկումներով, կը ցատկոտէին. ուրիշներ, ահարկու ազեղութեամբ ժպիտներով — ուր արիւնարբու կզակներու լայն բացուածքէն հալուաբլտ ու գիշակեր ակուաներու հրէշութիւնը կը ցցուէր — ծափ կը զարնէին մոլեգնօրէն. ու թմբուկներու, փողերու, ձեռնաղաչնակներու, ծնծղաներու խառնաշփոթ ու խլացուցիչ աղմուկին մէջէն, կարգով, ցնծութեան զառանցանքի մը պէս, միօրինակ բացագանչութիւն մը կերկարածգէին՝

— Օ՛ Սարյեշն Արւի՛:

Ինքքիբմէս ելած, չուզելով, չկրնալով հաւտալ իրականութեանը որուն ականատես կըլլայի՝ նայեցայ հինգ ցոյցի դրուած հայրենակիցներու: Խեղճերը իրենք ալ շուարած երեւոյթ մը ունէին, ու իրենց քովնտի վախկոտ նայուածքներուն մէջ կարծեցի կարգալ տարտամ կասկածը թէ՛ չըլլայ որ այդ մարդիկները իրենց վրայ խնդալու, իրենց խեղճութիւնը հեզնելու ելած ըլլային: Չէ՛, անգլխացի ծնած ըլլալու էր ապահովաբար կարենալու համար հանդուրժել, առանց խենդենալու, առանց գոնէ, խելացի ու տրամաբանական անտարբերութեամբ մը, թոքապատառ խնդալու այս տեսարանին առջեւ:

\* \* \*

Երկրորդ ու աւելի երկար աղօթքէ մը վերջ, զօրապետը, ընդհանուր լութեան մէջ, քառորդ ժամէ մը իվեր կը խօսէր ժողովուրդին:

Գթութեան պայմանադրական խօսքերու զգուշ-  
լի կրկնութիւն մըն էր զոր կը շեշտէր, կը  
ստորագծէր, ձայնի անինքնաբեր ու անճոռնի ե-  
լեւէջներով, ու իր բոլոր անգամներուն անշնորհ, ք  
ու կեղծաւոր խանդավառութիւնով:

Հայկական ջարդերուն վրայ էր նիւթը,  
ու ինծի համար անտանելի, չարչրկող բան մըն  
էր լսել, տեսնալ պղծումը, այդ ուսմիկ ու որ-  
եւէ բերնին մէջ, մեր խորունկ ու սրբազան  
Յաւին: Անասունի ախորժակով մը, ու հռետո-  
րական ոճրագործ պերճանքներով, մեր նահա-  
տակութիւններուն, մեր ահաւոր տառապանք-  
ներուն վսեմ ու կրկնապէս նուիրական Գող-  
գոթան կը ճգնէր ցուցնել ան, տխմարներու,  
անարժաններու ունկնդրութեան մը, որուն գը-  
թութեան արտայայտութիւնները կը վիրաւո-  
րէին զիս, նախատինքներու պէս:

Բայց զայրոյթս կատաղութեան փոխուե-  
ցաւ, երբ՝ զօրապետին հրաւերովը՝ ցոյցի զըր-  
ւած Հայերէն մէկը, անոնցմէ էն երտասարգը,  
բեմին վրայ յառաջանալով, իր կիսատ անգ-  
լիերէնովը, սկսաւ պատմել իր տեսած սոս-  
կունները: Դաշունուած մայրերու, բռնաբար-  
ւած քոյրերու, հրդեհուած գիւղերու, կողոպ-  
տուած ու պղծուած տաճարներու արիւնոտ ու  
եղբրական պատմութիւն մըն էր որ կը փըս-  
խէր ան, բարերարուածի հաճոյակատարու-  
թեամբ մը, ու ընկճուածի, անասնացածի կըս-  
կըծալի անգլիտակցութեամբ մը, այդ հետա-  
քըքրուած, ու ձրի կարեկցութեան անուշ յու-  
զումներով գինովցած խուժանին առջեւ: Ա՛հ,  
անպիտան տղան: Աւելի աղէկ պիտի ըլլար  
որ ինքն ալ, իր տարաբաղդ եղբայններուն հետ,  
զոհուած, լմացած ըլլար:

Բայց հետզհետէ աւելցող ոգեւորու-  
թեամբ մը՝ անձնական եղանակ մը սկսաւ տալ  
իր պատմութեան: Իր ազատումին, իր ճար-  
պիկ փախուստին վրայ կը խօսէր հիմա: Կըսէր  
թէ ինչպէս տանիքէ տանիք փախած, ինչպէս  
ծակէ ծակ պահուըտած էր, ու լսած, առանց  
երերալու իր տեղէն, օ՛հ, լսած ու տեսած ի-  
րեններուն խողխողումը, առանց բնական,  
մարդկային, անգիմադրելի շարժումով մը, մատ-  
նելու իր ներկայութիւնը, իր բռնաբարուած  
քրոջ, իր մորթուած ծերունի հօրը քով,  
տախտակորմին ետին...:

Ու իր անուր վատութեան ուշացած

գիտակցութիւնը ունենալու անկարող՝ տեսակ  
մը ցուցամուկ հպարտութեամբ կըսէր այս բո-  
ւորը: Ու այդ մարդիկը որ բերանաբաց մտիկ  
կընէին իրեն, չէ՛, անոնք չարհամարհեցին  
զինքը. ընդհակառակը, հիացան անոր վրայ,  
ու տարաւոր ու չխոստովանուած գորովով մը  
նայեցան անոր, հաւանելով ներքնուստ որ ի-  
րենք ալ անոր պէս պիտի ընէին, միեւնոյն  
պարագային: Եսական ու վատ հոգիներու խո-  
շոր ու հաւատարիմ եղբայրութիւնը կայ ամէն  
տեղ, մարդկութեան մէջ:

... Զգացի որ տարօրինակ բան մը կանց-  
նէր մէջս: Ամբողջ մամնովս կը դողայի: Ու  
խելայեղ՝ հաղիւ կարենալով զսպել կատաղու-  
թեան աղաղակ մը՝ ոտքի ելայ, ու գահավէժ  
քայլերով, հրմշտակելով խուժանը, սրահէն  
զուրս նետեցի ինքզինքս:

ՍՈՒՐԷՆ ՊՍԹԵԻԵԱՆ

ՍԵՆԱՍԱՐՏ

ԱՆԱՀԻՏԻ — Ոսկեծղիւն, բարեաց բաշխիչը  
— մեծանուն Խնքագրապետը վիրաւորիչ գնեկով  
մեր բարեկալ Պարբեւանի մեկ յորումը, իր վը-  
կակները (Պ. Պ. Սվանեան եւ Քօրջեան) դիպած էր  
Մանչեսթըր հասուցում պահանջելու:

Պարբեւանի վիակերն էին Պ. Մարտիրոս-  
եան ու Պ. Յորեքը:

Երկար տեսակցութեան մը ետքը չորս Պա-  
րոնները վճռեցին թէ մեծանաւստ մը անխուսա-  
փելի էր:

Գործածուելիք գեղիկն վրայ վիճաբանու-  
թիւնը աւելի երկար տեւեց: Մեծանուն Խնքագրա-  
պետի վիակերը կը պահանջէին իբրեւ գեղի գոր-  
ծածել կաւ դաշնակ մը (էռստ) եւ կաւ նշորակ մը:

Պ. Սվանեանի ղիտէր տրուեցաւ թէ դաշ-  
նակը նիւրախակապիս անկարելիութիւն մըն էր,  
այս գանձն մարդկութեան օրերուն ուր Սանկի-  
սոնները այնչափ ողբալիօրէն էին:

Բայց անուստ ճաղաչալի անկիջապիս 423  
տղ ոսակաւորով մը (աւերող Լըֆոնջ սը Լիլիակն)  
բացարեց թէ՛ աշխիս երբեք բանաւոր պատճառ  
մը չէր կրնար նկատուիլ:

Վերջապիս որոշուեցաւ որ երկու մեծա-  
ւաստիները իբրեւ գեղի պիտի գործածէին մեկ  
մեկ արտո:

Ա. Զօպակեան մասնաւոր կտախտութեամբ  
ւր Մակեյտր հասաւ երկէ գիշեր:

Բոլոր մեծ տղաները փութացած էին  
զինքն դիմաւորելու: Ու վաճառական դասին Տո-  
ւյեկը արտառայ շեշտեալ ուղերձ վր կարդաց,  
որ կը բացատրէ «այն անհուն զարկը զոր Ա-  
ՆԱՀԻՏ պիտի տար Հայ վաճառականութեան, իր  
գեղարուեստական ու ճօփօնայական յօդածնե-  
րով»: (Երկարատեւ ծախահարութիւն):

«Թորոյումներ» ու մեծանուն հեղինակը  
յուզուած շեշտով քանի վր բառեր քոքովեց, ու  
բռուն ու խեղաչեղ ծախահարութիւններու մեջ  
յայտարարեց թէ իր հն նոխրական պատկանու-  
թիւններէն մէկը կը հաւարէր, Մակեյտրի վա-  
ճառական Հայրութեան շահերուն յարմար սեւե-  
տագիտական ընդարձակ ու աշխատած ուսում-  
նասիրութիւն վր պատրաստել, ներշնչուելով Բի-  
վիս սը Ետիսնէն(1):

Ա. Զօպակեան գիշերը սնցոց Արպիօն օ-  
րէի մէջ, որ ի պատի մեծանուն այցելուին ըս-  
տանցելու յաւազարդուած էր:

Մեկանարսը տեղի ունեցաւ այս ամսու  
Հիւթօրթ Բարգին մէջ:

Առաջին հարուածին ԱՆԱՀԻՏի մեծանուն  
Խնթարապետը սնդրամուշի կերպով կորսնցոց  
իր ակնուշներէն մէկը, մին այն ակնուշներէն,  
բարակ, բարակցիկ ու անծայ որոնց կրճիկին  
մէջ այնչափ ներդաշնակութիւններ քրքուցած ու  
բիւրեղացած էին:

(1) ԱՆԱՀԻՏի Բ. քիւիկն մէջ — որուն ֆա-  
ղաբական տեսութիւնը մագ մնաց պիտի խալստ  
մոռցներ իր՝ թէն աննոռանալի՝ «Թորոյումնե-  
ր» — հանրածանօթ Վեհապետը՝ մեծ նկարիչին  
մահուան անքիւ սուգի կը հրաւիրէ մեր գեղար-  
ուեստաւոր ու երջանիկ սագր: Այս հրաւերը մեզի  
թեղարեց հաննարի գաղափար վր զոր կը փու-  
թակն հաղորդել մեր ընթերցողներուն:

Կառուարիկեմ Պօլոյ Միացեալ Հնկերու-  
թեան գնեղ մեծաբանակ Բիւլիսի գործերուն ըս-  
տանկարները, ու ասոնցով զարդարել սայ մեր  
գաւառական դպրոցներուն պատերը. — բայց մաս-  
նաւորապէս այն տեղերը ուր ամենեւ անէի կո-  
տրած եղաւ: (Ծ. Խ.)

Հինգ փայտեան դարպակ ետք, մեկու-  
մարսը վերական:

Արոտի հարուած վր երկուքի բաժնեց մեր  
բարեկամ Պարբեանի գրուիլը:

Բայց վերջը թեթեւ է, ու շնորհիւ Պ. Բօ-  
լոյեանի խնամքներուն քանի վր օրուան հանգիս-  
տ վր ետք, պիտի կրնայ նորէն երգել Անահիտի  
(Ոսկեծղին, բարեաց բաշխի) յարիտեանական հը-  
րապոյրները:

Մեկանարսէն ժամ վր վերջը, խոուն բազ-  
մութիւն վր ժողովուած էր բարգին սոցեր:

Ու եզական, հրաշալի տեսարան վրն էր  
ասիկա:

— Ակնեց վրն էր, մեծանուն Խնթարա-  
պետին նոխրական ակնուշը, որ մարմնակերտուն  
վրայ վրուած, իր մեկանոր ցարին խորէն դուրս  
կուտար իր մէջ հաւթարուած, բիւրեղացած բոլոր  
ներդաշնակութիւնները:

Եւ սա աննոռանալի բանը պատկերցաւ:

Հազար հոգիի բազմութիւն վր, բարգին  
մէջ, մեծախոս ու շուարած երկիւնքի վր սակ,  
մեկի ըրտ, արբազան յուզումով վր, անբողջ  
«Թանկագիր»ի վր զոր կուտար, անթերի օրքէս-  
զրէշքով վր՝ ակնեց վր, վրուած մարմնակեր-  
տուն վրայ...:

Շ Ա Յ Լ Օ Ք

\* Կը ցարխն որ այս անգամ աչ գոհացում  
տուած չպիտի ըղլաւ իմ Մակեյտրի այն պատ-  
ական ընթերցողներու, որով անմաւր թէ գրա-  
ւոր, զինմած էին ինծի խնդրելով որ երկար յօդ-  
ածով վր կաղնդեմ մեր Տերպապան, ու պատկեր  
իր շատերէ անգիտուած շահասակութիւնները: Այդ  
մարդը որ ինծի միջոց — մանաւանդ երբ ֆարոյ  
կը իօսի — յիշեցուցած է Վալիստ Խանի աճէմ  
— պարսիկը շատ նորք է — փիտէճիները՝ կար-  
ժէ որ յառաջիկային քանի վր տղ գոհեմի իրեն:

Ս. Պ.

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ՝

S BARTEVIAN,  
21, BRIGHTON ST., OXFORD RD.,  
(England.) MANCHESTER.